ՀՏԴ : 929:891.981Չարենց

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ. Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը, հ. Ա, *Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2022, 804 էջ + 16 էջ լուս. ներդիր*:*

Բանալի բառեր՝ Եղիշե Չարենց, Կարս, Երևան, Թիֆլիս, Մոսկվա, բանաստեղծություն, պոեմ, դեկլարացիա, գրական խմբակցություն, բանավեճ, Մյասնիկյան, Խանջյան, Ստալին:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն շրջանի պատմության բաժնի առաջատար գիտաշխատող Դավիթ Գասպարյանն ընթերցող լայն հանրությանն է ներկայացրել «Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը» վերնագրով ծավալուն մենագրությունը: Աշխատությունը գրականագետի տարիների վաստակի արդյունքն է՝ նախատեսված երեք հատորներից (հաջորդ երկու հատորը լույս կտեսնեն «Եղիշե Չարենցի ստեղծագործությունը» և «Եղիշե Չարենցի արվեստը» վերնագրերով):

Նկատենք՝ հեղինակն այս գրքի ստեղծմանը գնացել է գիտական-ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում՝ սկսած 1970 թ. ուսանողական դիպլոմային աշխատանքից՝ «Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի տաղաչափությունը», որին հաջորդել են Չարենցի կյանքի ու գործունեության լուսաբանմանը նվիրված բազմաթիվ մենագրություններ [այսպես, օրինակ, «Եղիշե Չարենցը և 1920-ական թվականների սովետահայ պոեզիան» (1983), «Ողբերգական Չարենցը» (1991), «Փակ դռների գաղտնիքը: Չարենցը, Բակունցը և մյուսները» (1994), «Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը» (1996), «Չարենցյան ասույթներ» (Բեյրութ, 1997), «Եղիշե Չարենցի հավատաքննությունը կամ Բանաստեղծի վերջին աղոթքը» (2003), «Հայկական ապագայապաշտություն» (2009)], նրա աշխատասիրությամբ հրատարակված Չարենցի անտիպ ժառանգության երկու հատորներ [«Նորահայտ էջեր» (1996), «Գիրք մնացորդաց» (2012, 2017)], հուշերի երկու գիրք (1997, 2008) և երկերի քառահատորյակ (2012–2015):

Հատորի «Մուտք»-ում Դ. Գասպարյանը հիմնավորում է գրքի կառուցվածքը, ըստ որի՝ Չարենցի «կյանքը պետք է ներկայացնել ժամանակագրության ձևով՝ ընդգրկելով բոլոր փաստերը, բոլոր մանրամասները, օգտագործելով իր գեղարվեստական երկերը, բոլոր տեսակի գրությունները, նրա մասին պատմող և մեծ հարստություն բովանդակող հուշերը, մամուլի ու պահոցների նյութերը: Այդպես կենսագրության փաստացի կառուցվածքը կընդունի հանրագի-

---

** Ներկայացվել է 07. I. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

տարանային բնույթ, ինչն ավելի կհեշտացնի գրքից օգտվելու հնարավորությունը: Բացի դրանից՝ հնարավոր կլինի ներկայացնել ժամանակն ու գրական-մշակութային միջավայրը, որի մեջ ապրել ու գործել է այդ բացառիկ հանճարը. այլ կերպ՝ կենդանի՛ մարդը՝ իրական պատմական ժամանակի, մարդկային ու ստեղծագործական հարաբերությունների համակողմանի անդրադարձներով» (էջ 3–4):

Հեղինակը բարձր է գնահատում չարենցագիտության անցած ճանապարհի ձեռքբերումները՝ սկսած նրա գրքերի առաջին գրախոսություններից, նրան նվիրված Սիմոն Հակոբյանի առաջին մենագրությունից (Վիեննա, 1924), 1920–1930-ական թվականների մամուլում նրա մասին տպագրված հարյուրավոր հոդվածներից, մինչև 1950-ականներից առ այսօր լույս տեսած բազմաթիվ գրքերը: Դրանցից աղբյուրագիտական-հետազոտական առումով առանձնացնում է հատկապես բանասիրական գիտությունների դոկտոր, վաստակաշատ գրականագետ-գրաքննադատ Ալմաստ Զաքարյանի «Եղիշե Չարենց. կյանքը, գործը, ժամանակը» եռահատոր աշխատությունը (հ. 1–3, 1997, 2003, 2008), որը, սակայն, ընդգրկում է մինչև 1927 թ. ընկած շրջանը (կիսատ է մնացել հեղինակի մահվան պատճառով): Այս տեսակետից՝ գրախոսվող գիրքը նաև չարենցագիտության անցած ճանապարհի գնահատություն է՝ անհրաժեշտ հղումներով և տարատեսակ անդրադարձներով:

Գրքի կառուցվածքը՝ որպես ժամանակագրություն, շատ հստակ է. տարեթիվ, ամիս, օր, փաստ, սկզբնաղբյուր: Սա նախընտրելի տարբերակ է, որովհետև իրար են հաջորդում օրերի, երբեմն անգամ նույն օրվա ընթացքում տեղի ունեցած իրադարձություններ, որոնք կողք կողքի ստեղծում են իրավիճակի չափազանց հավաստի պատկերը: Այսպես ստեղծվում է ոչ միայն Չարենցի կյանքի, այլև ժամանակի պատմական, ազգային, քաղաքական, հանրային, մշակութային իրադարձությունների վավերապատումը: Չարենցի ստեղծագործական նախադրյալները երկուսն են՝ անձնական կենսագրություն և ժամանակի պատմություն: Ուստի Դ. Գասպարյանի կիրառած պատմակենսագրական համաժամանակյա մեթոդը, որ ընկած է գրքի հիմքում, այս ձևի մեջ լիարժեքորեն արդարացվում է: Գրողի կենսագրական փաստը երբեմն զուգորդվում, երբեմն շրջանակվում է ժամանակը ներկայացնող պատմական, մշակութային, գրական լրացուցիչ փաստերով: Եվ այստեղ է, որ անհրաժեշտություն է ոչ միայն փաստն ինքնին, այլև փաստը լրացնող մանրամասնը, որը խոսքի տվյալ միջավայրում է ստանում կարևորություն և այլ առիթով կարող էր նույնիսկ ուշադրության չարժանանալ:

Եվ այսպես՝ Չարենցի կյանքը ծննդյան պահից՝ ծնունդը գրանցող Կարսի սուրբ Աստվածածին եկեղեցու «Զափաբերական մատյան»-ը, ծնողները, կնքահայրը, մկրտությունը, քույրերն ու եղբայրները, ծննդավայր Կարսը, իրենց տունը, հոր խանութը, ռեալական ուսումնարանը, ընկերները, ուսուցիչները, աշակերտական առօրյան, նախասիրությունները, հետաքրքրությունները, գրական առաջին քայլերը…

Անընդհատ կարելի է հանդիպել նորությունների, և դա՝ սկսած տոհմաբանությունից, ըստ որի՝ տոհմի նախահայրը եղել է Սողոմոնը, այստեղից՝ Սողոմոնյան ազգանունը, նրան հաջորդել է Մարգարը, Մարգարին՝ Աբգարը, Աբգարին՝ Եղիշեն: Մարգար անունը, որ հիշատակվում է «Զափաբերական

մատյան»-ում, նախկինում շրջանցվել է: Ապրել են Մակու քաղաքում: Մակուից դուրս է եկել Աբգարը և նախ՝ բնակություն հաստատել Կարինում (Էրզրում), ուր Կանա ճանապարհի վրա ունեցել է երկհարկանի շեն տուն, իսկ նրա ավագ աղջիկները հաճախել են Հռիփսիմյան օրիորդաց վարժարան, այնուհետև՝ հաստատվել Կարսում, ուր և ծնվել է Չարենցը: Այստեղ նաև Չարենցի ու ընտանիքի անդամների, մասնավորապես՝ Չարենցի և հոր հարաբերությունների թնջուկն է, որովհետև Չարենցը «այդպես էլ տան տղա չդարձավ» (էջ 12): Ներկայացվում է ընտանիքի տեղաշարժի շարունակվող հետագիծը՝ Կարսից՝ Թիֆլիս, Թիֆլիսից՝ Մայկոպ:

Առաջին տպագիր բանաստեղծություն (1912), առաջին գիրք (1914), սրանց հետ կապված մանրամասներ՝ ստեղծագործական ձևավորում, գրական ազդեցություններ, հոգեբանական ազդակներ: Չարենցը 1914–1915-ին Կարսի միջավայրում՝ բանաստեղծի երևույթը գավառական քաղաքում՝ քաղաքային այգի, աղջիկներ, բանաստեղծություններ, առաջին հրապուրանքներ:

1915 թ. օգոստոս–սեպտեմբեր ամիսներին Չարենցը զինվորագրվում է Հայոց Ազգային բյուրոյի ձևավորած կամավորական 6-րդ ջոկատին, որը շուտով վերակազմավորվում է որպես 7-րդ ջոկատ: Չարենցը հայրենիքի զինվոր. այստեղ ևս յուրովի բացահայտվում է նրա կերպարը: Հասնում է մինչև Վան, մասնակցում ռազմական գործողությունների, հանդես գալիս ելույթով: Ռազմաճակատ մեկնելուց առաջ հրատարակել էր «Կապուտաչյա հայրենիք» պոեմը, վերադարձին գրում և տպագրում է «Դանթեական առասպել» պոեմը: Խոսքն ու գործը միասնական էին: Ընտանիքից արդեն հեռացել էր, տանն անգամ չեն էլ իմացել, որ կամավոր մեկնել է պատերազմ, իսկ շուտով բռնում է Մոսկվայի ճանապարհը՝ ուսանելու Շանյավսկու համալսարանում:

Չարենցի վարքի ազատ նկարագիրը, ստեղծագործական խառնվածքը Գասպարյանը ներկայացնում է այսպես. «Գրական-ստեղծագործական խառնվածքները տարբեր են լինում՝ ծանրահոս խաղաղ գետերի պես հանդարտ ու դասական, ինչպես Գյոթեն, Պուշկինն ու Թումանյանը, Բալզակն ու Տոլստոյը, ինչպես շա՛տ շատերը ... Չարենցն իր կենսական էներգիայով այդ խմորից չէր, այլ այն, որից էին Ֆրանսուա Վիյոնը, Պոլ Վեռլենը, Էդգար Պոն, Օսկար Ուայլդը, Վինսենթ վան Գոգը, ինչու չէ՝ նաև Վլադիմիր Մայակովսկին ու Սերգեյ Եսենինը՝ արտաքուստ անկանխատեսելի, ներքուստ շատ բնական, իսկ չհասկացողի համար՝ հակասական ... Այդպիսի հանճարները դժվար են ընկալվում, դժվար են ընտելացվում մշակութային ճաշակին, որովհետև նրանցից յուրաքանչյուրի ինքնությունն ըստ էության մինչև վերջ չի էլ գիտակցվում ու գաղտնազերծվում: Նրանց հոգեբանական ազդակի և մտավոր ու ֆիզիկական արարքի միջև տարածություն չկա, ամեն ինչ կատարվում է կայծակնային արագությամբ» (էջ 7): Չարենցի իրական կերպարն ուրվագծելով՝ գրքի հեղինակը նաև չի սրբագործում նրան, չի շրջանցում սուր ու վտանգավոր տեղերը, չի խմբագրում կամ «գեղեցկացնում» նրա վարքը: Չարենցին նայում ու տեսնում է այնպես, ինչպես ինքն է հուշել «Խոհ» գործի մեջ. «Ընդունում եմ ինձ այնպես, ինչպես կամ» («Երկերի ժողովածու», հ. 4, Երևան, 1968, էջ 40):

Նույն այդ հայացքով, ըստ Գասպարյանի, «... կան գրողներ, ովքեր սուրբերի շարքում են՝ Ոսկեդարի մեր մեծերը, Նարեկացին, Շնորհալին, ըստ էության այդպիսին են Դուրյանն ու Մեծարենցը: Սուրբ նահատակ է Կոմի-

տասը: Զարենցը և նրա նմանները կյանքի մարդիկ են, նրանց չափն ու չափանիշը կյանքի օվկիանոսն է ու ժամանակի հարափոփոխ պատմությունը: Սրբությունը նրանց համար չէ, նրանք կյանքի մարդիկ են ու պայքարի մարտիկներ: Միայն այդպե՛ս՝ իրենց կենդանի տարերքի մեջ պետք է ճանաչել ու գնահատել նրանց: Սուրբը երևելի է իր սրբությամբ, կյանքը հրաշալի է իր կենսականությամբ. նրանց վառած ջահերի միջով է անցնում մարդկության հոգևոր ու մտավոր ճանապարհը: Այդ ճանապարհը լուսավորում է նաև Զարենց-ջահը» (էջ 7–8):

Հանճարին իր վարքի ազատության մեջ ճանաչելու այս մոտեցումը մոսկովյան տարիներից սկսած՝ ավելի է դրսևորվում և դառնում պարտադիր նախադրյալ: Գրական առումով սրանք Զարենցի լիացման տարիներն են: Մոսկվայում էլ գրում և 1917-ի փետրվարին տպագրում է «Բանաստեղծություններ: Ծիածանը» ժողովածուն: Մարտին Կարսում էր, հետո՝ Թիֆլիս, այնտեղից դեկտեմբերին՝ Կարին, որը զորավար Անդրանիկի ղեկավարությամբ վերջին դիմակայությունն էր ցույց տալիս դարավոր ոսոխին, և ուր հղանում ու հաջորդ տարի Թիֆլիսում ավարտում ու տպագրում է «Ազգային երազ (պոեմ երգիծական և ողբերգական)» երկը: Զարենցն անընդհատ տեղաշարժերի մեջ էր. Թիֆլիսն ու Մոսկվան նրա հանգրվաններն էին: Մոսկվայում եռում էր մշակութային կյանքը, կային հատուկ գրական սրճարաններ՝ ամենուր դասախոսություններ, ստեղծագործական հանդիպումներ: Ռուս ֆուտուրիստները պարբերաբար ելույթներ էին ունենում նաև Թիֆլիսում: Իսկ երբ 1917-ի փետրվարին պայթեց հեղափոխությունը, Զարենցը նրանց շարքերում էր: Նրանց շարքերում էր նաև հոկտեմբերյան իրադարձություններից հետո՝ 1918-ի ամռանը՝ արդեն զենքը ձեռքին: Փողոցն ու հրապարակն էլ, ըստ էության, դառնում են նրա թե՛ գրական, թե՛ քաղաքացիական կերպարի ձևավորման դաստիարակն ու համալսարանը: Այնպես, ինչպես Զարենցը տան տղա չէր, ճիշտ այդպես էլ՝ առանձնասենյակային գրող չէր:

Այս ընթացքում հռչակվում է Հայաստանի Հանրապետությունը: Զարենցի վերաբերմունքը նորանկախ երկրի հանդեպ բացահայտվում է «Սոմա», «Ամբոխները խելագարված» և «Զարենց-նամե» պոեմների գաղտնագրերի նորովի մանրակրկիտ վերլուծությամբ: Զարենցն ընդունեց հեղափոխությունը՝ առաջին հերթին փորձելով այն հաշտեցնել իր երկրի պատմական ճակատագրի հետ: Այդ ջանքով են գրված նրա «Ողջակիզվող կրակ» շարքը և 1918–1920 թթ. բազմաթիվ գործեր: Գասպարյանը ներկայացնում է յուրաքանչյուր պոեմի, շարքի, բանաստեղծության ստեղծման ինչպես պատմական, այնպես և կենսագրական նախադրյալները: Այս տեսակետից շատ ուշագրավ է «Բոլորին, բոլորին, բոլորին» (1920) վերնագրով հրատարակված երեք ռադիոպոեմների վերլուծությունը: Ընդամենը մեկ տարի առաջ Երևանում տեղադրվել էր բարձր հաճախականություն ունեցող ալեցիր, գործում էր ռադիոկայան, և ահա՝ ռադիոն Զարենցի ստեղծագործության մեջ դառնում է աշխարհին ուղղված ռադիոպոեմ: Հայտնաբերվում է ժամանակի գրական ժանրը՝ ռադիոպոեմ. պատմական փաստը Զարենցը դարձնում է գեղարվեստի փաստ:

1919–1920 թթ. իրադարձությունների շարքում էջեր են՝ նվիրված ՀՀ կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանի հայտնի զեկուցմանը՝ «Մի նոր բանաստեղծ-Զարենց», և դրա շուրջ ստեղծված գրական մթնոլորտին,

զեկուցումից շուրջ երեք ամիս ուշացումով Աղբալյանին ներկայացած Չարենցին և նրա պաշտոնավարմանը նախարարությունում: Այստեղ էլ հանդիպում ու մտերմանում է բանաստեղծուհի Արմենուհի Տիգրանյանի հետ: Նրանց միջև ձևավորվում են զգացական նուրբ կապեր, որոնք ծնունդ են տալիս Չարենցի «Էմալե պրոֆիլը Ձեր: Գալանտ երգեր» շարքին և Տիգրանյանի բազմաթիվ բանաստեղծությունների: Տիգրանյանի հանդեպ Չարենցի հոգատար վերաբերմունքը շարունակվում է նաև Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ մինչև նրա մեկնումը հայրենիքից: Հայաստանի Հանրապետության տարիներին Չարենցը տարատեսակ առնչություններ է ունենում ՀՅԴ առանձին գործիչների հետ (Աղբալյանից ու Տիգրանյանից բացի՝ Վարդգես Ահարոնյան, Վահան Խորենի, Վահան Նավասարդյան և ուրիշներ), որոնք շարունակվում են հետագա տարիներին՝ թողնելով երբեմն գրավոր վկայություններ, երբեմն՝ պարզապես կենսագրական հետքեր:

Այս տարիներին նա ստեղծագործական կապերի մեջ էր նաև հայագետ, «Հայաստանի կոոպերացիա» ամսագրի խմբագիր Դավիթ Անանունի հետ, որ ամբողջական ընդգրկումով ներկայացված է գրքում՝ նամակագրություն, բանաստեղծությունների տպագրություն, մարդկային առնչություն:

Ուշագրավ է Չարենցի «Մահվան տեսիլ» բանաստեղծության պատմական նախադրյալների բացահայտումը՝ Կարսի անկման մահացու տեսիլը, դասալիքներ, նրանց պատժելու համար Երևանի, Կարսի հրապարակներում կանգնեցված կախաղաններ, վերջին զոհի գիտակցություն, և ինքը՝ որպես վերջին զոհ: Այս խտացված պատմակենսագրական հատվածը բացելու և ծավալելու դեպքում՝ կդառնա մի ամբողջ ուսումնասիրություն: Նշում ենք, որովհետև այդպիսի խտացումներով հագեցված է ամբողջ գիրքը:

Ամենայն մանրամասնությամբ ներկայացվում է Չարենցի կյանքի ու գործունեության խորհրդային շրջանը: Այսպես թե այնպես՝ Չարենցի ստեղծագործական կյանքի ծանրության կենտրոնը խորհրդային շրջանն է, որը նա և՛ ողջունեց, և՛ դարձավ քաղաքական հալածանքների զոհը:

Բայց մինչ այդ ճանապարհն անցնելը պետք է հաշիվները փակեր անցյալի հետ: Այդպես է, և ճիշտ է նկատել բանաստեղծի կենսագիրը՝ իր ստեղծագործության մեջ Չարենցը ոչինչ չի թողել թերի, անավարտ կամ անպատասխան: Այդ գործը, ահա, «Երկիր Նայիրի» վեպն է (գրել է 1921–1924 թթ., «Նորք» հանդեսում տպագրել 1922, 1923, 1925 թթ., առանձին գրքով՝ 1926 թ.), որի գլխավոր ասելիքն այն էր, որ, այո՛, 1915–1920 թթ. հայ ժողովուրդն անցավ մահերի ու կորուստների միջով, բայց այսօր պետք է ապրելու ուղիներ որոնի: Ըստ Չարենցի՝ որքան էլ թանկ ու հարազատ է հանգուցյալը, որքան էլ անպակաս են սուգն ու ողբը, միևնույն է՝ հանգուցյալին պետք է հանձնել հողին, որ նույնն է՝ պարտությունը ծանր է, բայց մնացողները պետք է ապրեն:

Մյասնիկյանի աջակցությամբ Մոսկվայում տպագրելով «Երկերի ժողովածուի» երկհատորյակը (1922), որը բացառիկ իրողություն էր այն տարիների համար, դրանով ի մի բերելով տասնամյա ստեղծագործական շրջանը՝ Չարենցը վերադառնում է Հայաստան և լծվում նոր գրականություն ստեղծելու գործին: Այս ընթացքում՝ ծրագրային ելույթներ, գրական խմբակցություններ («Երեքի դեկլարացիա», «Standard») և այդ ամենը գեղարվեստի վերածող գրքեր («Պոեզոզուռնա», «Ռոմանս անսեր», «Կապկազ թամաշա», «Կոմալմա-

նախ»), նաև շեփորահանդեսներ, դասախոսություններ, գրքերի քննարկումներ, գրական դատեր ... Իր այս բուռն գործունեությամբ, ինչպես նկատում է հեղինակը, Չարենցը Երևանն արթնացրեց թմբիրից և «մայրագյուղը» դարձրեց իսկական մայրաքաղաք: Գրական եռուզեռի մեջ շատ հանգամանորեն բացահայտված են Չարենցի հոգևոր առնչությունները ինչպես Թումանյանի ու Տերյանի, այնպես և՝ Մայակովսկու ու Եսենինի հետ: Իսկ նրա կողքին, նաև նրա դիմաց գրական նոր սերունդն էր, որի հետ համագործակցելով կամ բանավիճելով՝ դեռ պիտի ճանապարհ գնար:

Չարենցի «ձախ» որոնումները Մյասնիկյանի սրտով չէին, ուստի ամեն ինչ արեց, որպեսզի նա մեկնի Եվրոպա և շփվի համաշխարհային մշակույթի արժեքներին: Չարենցի արտասահմանյան ուղևորությունը [«Արտասահմանյան ուղևորություն (1924, 21 նոյեմբեր– 1925, հունիսի սկիզբ)» վերնագրի ներքո] մեկնաբանված է բավականին նոր փաստերի հիման վրա, բացահայտված են նաև բազմաթիվ գրական կապերի ու առնչությունների նոր նրբերանգներ ու շերտեր (Իսահակյան, Կոստան Զարյան, Երվանդ Քոչար և ուրիշներ):

Արտասահմանից վերադաձավ միանգամայն փոխված, ստեղծեց «Նոյեմբեր» խմբակցությունը, իր շուրջ համախմբեց ժամանակի գրական լուրջ ուժերը (Մահարի, Արմեն, Բակունց) և սկսեց մի նոր շարժում: Ըստ Գասպարյանի՝ «Նոյեմբեր» խմբակցությունն իր տեսական պահանջներով և ստեղծագործությամբ խտացնում էր ազգային առանձնահատկությունները և բարձր արվեստի պահանջը: Բազմաթիվ էջեր՝ որպես գրապայքարի վավերացում, նվիրված են «Նոյեմբեր»-ի գործունեությանը՝ կազմակերպական աշխատանք, գրքերի և թերթի հրատարակություն, համագումար, դասախոսություններ, քննարկումներ և այլն, իսկ նրանց դեմ Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան էր, որը կուսակցության սխեմատիկ պահանջներով ձգտում էր «հեգեմոնիայի», կարգախոս ունենալով՝ նախ՝ կուսակցական, ապա՝ բանաստեղծ դրությը: Պայքարը սուր էր, որն աստիճանաբար ձեռք բերեց քաղաքական բովանդակություն:

Համաժամանակյա հոսքի մեջ հեղինակը ներկայացնում է 1926 թ. սեպտեմբերի 5-ին Չարենցի հետ տեղի ունեցած աղետալի միջադեպը, որը գրքում շարադրված է «Պատմություն Մարիանա Այվազյանի (1926, 5 սեպտեմբեր – 1927, 24 մարտ)» վերնագրի ներքո: Կրակոց, ձերբակալություն, բանտ, դատավարություն, կալանք՝ 8 տարի խիստ ռեժիմի պայմաններում, 3 տարի, ի վերջո, մարդասիրական վերաբերմունք և 6 ամիս անց՝ ազատություն: Ահա դրանից հետո է գրում «Երևանի ուղղիչ տնից» հուշակնարկը և «Ձիու մոռթ» բանաստեղծությունը՝ հասցեագրված հենց իրեն՝ Մարիանա Այվազյանին:

... Այնուհետև Չարենցին տեսնում ենք «Հայպետհրատում»՝ հրատարակչական գործունեության մեջ (1928–1935), որը, ըստ Դ. Գասպարյանի, այլ բան չէ, քան «Չարենցի դար», որի պսակը նրա օրոք ստեղծված վերջին գիրքն է՝ «Սասնա ծռեր»-ի պատումների առաջին հատորը: Հրատարակիչ Չարենցը բացեց բազմաթիվ երիտասարդ գրողների ճանապարհը, տպագրեց դասականների՝ Պարոնյան, Սունդուկյան, Թումանյան, Մեծարենց: Զարկ տվեց թարգմանական գրականությանը (Սերվանտես, Շեքսպիր, Սվիֆթ, Պուշկին, Տոլստոյ, Դոստոևսկի, Գորկի ...), ստեղծեց մի քանի մատենաշար:

Չարենցի կենսապատումն ընթանում է անձնական, ստեղծագործական, գրական-կազմակերպական, քաղաքացիական կյանքի միասնական շարադրանքով: Հեղինակը մանրակրկիտ ներկայացնում է Չարենցի երկու ամուսնությունները՝ Արփենիկ Տեր-Աստվածատրյանի, նրա մահից հինգ տարի անց՝ Իզաբելա Նիազյան-Կոդաբաշյանի հետ: Նրանց կյանքի պատմությունն է, Չարենցի հարաբերություններն են նրանց հետ, Իզաբելայի դեպքում նաև նրա կյանքի պատմությունը Չարենցից հետո: Բոլոր «սյուժետային» գծերը հեղինակը հասցնում է լրումի, ոչինչ առկախ չի թողնում նաև Չարենցի կյանքում եղած մյուս կանանց առումով, որոնց լուսանկարները ներկայացվել է գրքում զետեղված ներդիրում: Ինչպես կարելի է շրջանցել Աստղիկ Ղոնդախչյանին, Կարինե Քոթանջյանին, Լյուսի Թառայանին, Արմենուհի Տիգրանյանին, Մարիանա Այվազյանին, Արաքս Մանուկյանին, Ռեգինա Ղազարյանին, Արուս Ոսկանյանին, նաև՝ Էռային, Մագդային, Արմիկին, երբ նրանք եղել են բանաստեղծի հրապուրանքի ու հետաքրքրությունների ոլորտում, դարձել նրա մուսան և վերածվել հրաշալի բանաստեղծությունների:

Դ. Գասպարյանն առկախ չի թողնում նաև Չարենցի ոչ մի առնչություն ժամանակի գրական, մշակութային, քաղաքական, կուսակցական գործիչների հետ: Ըստ այդմ՝ ցայտուն ներկայացված են մի կողմից՝ Չարենցի, մյուս կողմից՝ գրողներից՝ Հովհաննես Հովհաննիսյանի, Թումանյանի, Տերյանի, Իսահակյանի, Դեմիրճյանի, Զորյանի, Զոպանյանի, Գառնիկ Քալաշյանի, Կոստան Զարյանի, Նաիրի Զարյանի, Բակունցի, Մահարու, Արմենի, Դաշտենցի, Նորենցի, Տարոնցու, Ալազանի, Վշտունու, Մայակովսկու, Եսենինի, Պաստեռնակի, Մանդելշտամի, Տաբիձեի, Միծիշվիլու, քննադատներից՝ Աղբալյանի, Սուրխաթյանի, Մակինցյանի, Սիմոն Հակոբյանի, Գարեգին Լևոնյանի, Սուրեն Երզնկյանի, Վանանդեցու, Դաբաղյանի, Կիրպոտինի, արվեստի մյուս բնագավառների ներկայացուցիչներից՝ Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի, Ռոմանոս Սահակյանի, Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի, Ռուբեն Սիմոնովի, Արուս Ոսկանյանի, Կարո Հալաբյանի, Միքայել Մազմանյանի, քաղաքական-կուսակցական գործիչներից՝ Մյասնիկյանի, Խանջյանի, Ամատունու, Մուղդուսու, Բերիայի, Ստալինի հետ: Բոլորը տարատեսակ կապեր են՝ բացահայտված փաստերի առկայությամբ:

Չարենցը գրքի մարդ էր և գրքեր գնել ու հավաքել է առաջին իսկ քայլերից. առաջինը Տերյանի 1912-ին լույս տեսած «Բանաստեղծություններ»-ի ժողովածուն էր: Գասպարյանը չի մոռանում, որ ուր էլ լիներ՝ Թիֆլիսում, Մոսկվայում, Լենինգրադում, թե Վենետիկում կամ Բեռլինում, առաջինը մտնում էր գրախանութ, գնում գրքեր, տիտղոսաթերթին նշում անում՝ ե՞րբ գնեց, որտե՞ղ և հաստատում ինքնագրով: Երբեմն նույն գիրքը գնում էր երկու օրինակ և մեկը նվիրում իրեն այցելած արժանավոր մեկին:

Տարեցտարի փոխվում և հասունանում է Չարենցի կերպարը. այդ անցումները յուրաքանչյուր իրադարձության հետ մեկտեղ բազմաթիվ փաստերով արտացոլված են գրքում. այլ է նա իր խայթող էպիգրամները գրելիս, «Էպիքական լուսաբաց» ժողովածուն և «Լիրիքական անտրակտ» շարքը հրատարակելիս ու միանգամայն այլ՝ «Գիրք ճանապարհի»-ի տպագրության օրերին: Թեև «Էպիքական լուսաբաց»-ը՝ նոր արվեստի ծրագիր առաջադրող այդ բացառիկ գիրքը, ևս ինչպես հարկն է չգնահատվեց, բայց, բոլոր դեպքերում,

միջավայրը դեռևս գրական էր. Չարենցին դեռևս քննադատում էին, չէին մեղադրում: Այլ էր վերաբերմունքը «Գիրք ճանապարհի»-ի հանդեպ, երբ գրական հայացքին փոխարինեց քաղաքականը, և Չարենցը դիտվեց որպես հանցագործ: Բազմաթիվ նորահայտ վավերագրերով ներկայացված է «Գիրք ճանապարհի» ժողովածուի տպագրության պատմությունը՝ 1933 թ. ազդարարությունները, դրանց առգրավումը, տպաքանակի կալանքը, Չարենցի հոգեկան ծանր կացությունը, գրքի կապակցությամբ հեռագրեր Ստալինին և Մարիետա Շահինյանին, ՀԿ(բ)Կ Կենտկոմի դիրքորոշումը, Բերիայի դրածոների սադրիչ գործունեությունը, ի վերջո, Ստալինի կարծիքը գրքում զետեղված «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» ինտերմեդիայի (միջարար) կապակցությամբ, որից հետո այն հանվում է գրքից, ծավալը լրացվում այլ նյութերով և 1934 թ. հուլիսին՝ ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումարի նախօրյակին լույս տեսնում: Սա Չարենցի վերջին դժվար հաղթանակն էր, որովհետև գրական-կուսակցական շրջանակներում դրանից հետո նա արդեն անվստահելիների շարքում էր:

... Չարենցն արդեն միութենական անուն էր. Մոսկվայում և Թիֆլիսում նախատեսվում էր նրա ռուսերեն ժողովածուների հրատարակությունը, «Երկիր Նայիրի» վեպը ռուսերեն ունեցավ 4 հրատարակություն, թարգմանվեց և տպագրվեց նաև վրացերեն: Ահա այս հեղինակությամբ նա մեկնեց ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումար, ուր, ըստ Գասպարյանի, ունեցավ ժամանակի համար համարձակ ելույթ: Շեշտելով համադրականության անհրաժեշտությունը՝ որպես ժամանակակից մտածողության նախահիմք, ընդդեմ արվեստը պարզունականացնելու կոչված պրոլետգրողների կոչերի՝ պաշտպանեց բարդ, հասուն գեղարվեստի պահանջը և ավելացրեց՝ ինչպես ազգային հանրապետությունների գրողներն են օգտվում ռուս մեծ գրականության ավանդույթներից, այնպես էլ ռուս և ռուսագիր գրողները լավ կանեն, որպեսզի օգտվեն ազգային գրականությունների դարավոր ավանդույթներից և, որպես օրինակ, նշեց, թե գրական ժանրերի ու բառապաշարի հարցում ինչ մեծ օգնություն է ցույց տալիս իրեն հայ միջնադարյան տաղերգությունը: Իսկ Նաիրի Զարյանը նույն ամբիոնից, նաև հետագա ելույթներում քննադատեց Չարենցին «դպրություն» «գրաբար բառը» և միջնադարյան տաղերգության հանգաբանությունը օգտագործելու համար և նրան հորջորջեց «նացիոնալիստ»:

Շատ դրամատիկ անցումներով են չարադրված Չարենցի կյանքի վերջին տարիները: Բազմաթիվ նորահայտ վավերագրերի հղումով Գասպարյանը ներկայացնում է այն մղձավանջային վիճակը, որին մատնված էր Չարենցը: Նախ՝ 1935 թ. հունվար–մարտ ամիսներին նրան ենթարկում են հարցաքննություններ և մեղադրում որպես ահաբեկիչ, դրանից հետո հանդես է գալիս իր սոցիալական ծանր վիճակը ներկայացնող «Հայտարարությամբ», այնուհետև՝ մարտի 13-ին՝ իր ծննդյան օրը, նրան հեռացնում են Գրողների միությունից:

Չարենցը նաև հիվանդության պատճառով դուրս է մղվում գործնական կյանքից. հիմնականում տանն էր, անկողնային վիճակում: 1935 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում՝ Կրեմլում, հայ աշխատավորների պատվիրակության ընդունելության ժամանակ, Ստալինի կողմից Չարենցին հիշելուց, Ստ. Զորյանից նրա որպիսությամբ հետաքրքրվելուց հետո, մի կարճ շրջան նրա վիճակում բարելավում է նկատվում. նշանակվում է Պուշկինի մահվան 100-րդ

տարելիցը նշող հանրապետական հոբելյանական հանձնաժողովի նախագահ (մինչ այդ ընդգրկվել էր Գորկու գլխավորությամբ գործող համամիութենական հանձնաժողովի կազմում), Խանջյանի ջանքերով նախատեսվում է բուժման նպատակով ուղարկել արտասահման: Սակայն ամեն ինչ գլխիվայր շուռ է գալիս 1936 թ. հուլիսի 9-ին Թիֆլիսում Բերիայի կողմից Խանջյանին սպանելուց հետո: Կենտկոմի նոր քարտուղար նշանակված Ամատունու օրոք՝ որպես Խանջյանի հովանավորյալներ, սկսվում է հայ մտավորականության ձերբակալությունը: Գասպարյանն անուն առ անուն հիշատակում է գրական-մշակութային ոլորտի բոլոր հալածյալներին և թվական տվյալներով ցույց տալիս, թե ինչ էր կատարվում ամբողջ երկրում, երբ 1937–1938 թթ. յուրաքանչյուր 57 րոպեն մեկ ԽՍՀՄ-ում մեկ մարդ էր գնդակահարվում:

Ամատունու օրոք չեղարկվում է բուժման նպատակով Չարենցի արտասահման մեկնելու հարցը. նա ազատվում է պուշկինյան հանձնաժողովի նախագահի պարտականություններից, 1936 թ. նոյեմբերի 16-ին ենթարկվում մահացու հարցաքննության, մեղադրվում որպես նացիոնալիստ, նախապատրաստվում է դատական վարույթ սկսել նրա հանդեպ, իսկ մոսկովյան քննադատ Վալերի Կիրպոտինը 1937 թ. ապրիլի 17–21-ին հրավիրված հայ գրողների ընդհանուր ժողովում հայտարարում է. «Չարենցի ձեռքից բռնեց թշնամին»:

Հետագա ամիսները՝ մինչև ձերբակալություն, Չարենցի ինքնապաշտպանությունն է Ամատունուն հասցեագրած տարբեր գրություններով, աղմկալի արհամարհանքը իշխանությունների հանդեպ և հերոսացումը՝ որպես գրականության տեր, որտեղ իր գրական ընկերները՝ այնտեղ էլ ինքը: Իսկ գրական ընկերները բանտերում էին:

Բազմատեսակ փաստերի համադրումով, որտեղ նաև Չարենցի ինքնակենսագրական բանաստեղծություններն են, որոնցով լի է նրա 1935–1937 թթ. գրած և իր ժամանակ անտիպ մնացած ժառանգությունը, Դ. Գասպարյանը կերտել է Չարենցի՝ որքան ողբերգական, նույնքան հերոսական կերպարը: Սա հանճարի ողբերգությունն է՝ մատնված հեղափոխության 20-ամյակի առթիվ ԽՍՀՄ-ում մոլեգնած քաղաքական հողմերին:

Հատորը եզրափակում են «1938 և հետագա թվականներ», «Արդարացում», «Մարդը» («Չարենցի բնութագրումներ», «Անկատար մտահղացումներ», «Չարենցյան», «Ձեռագրերը»), «Իգաբելա Չարենց», «Անհատականություն և ստեղծագործական ազատություն», «Օգտագործված գրականություն» բաժինները: Ներդիրի ձևով 16 էջի վրա խմբավորված ներկայացված են Չարենցին առնչվող խոսուն լուսանկարներ:

Հավելենք՝ հատորի խմբագիրներն են բ. գ. դ., պրոֆ. Սամվել Մուրադյանը և պ. գ. դ. Ամատունի Վիրաբյանը: Մեծադիր ու շքեղ այս աշխատությունը տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչատանը:

Մի քանի նկատառում-դիտարկում: Շահեկան կլիներ, եթե գիրքն ունենար անձնանունների և տեղանունների անվանացանկեր, նաև՝ ռուսերեն ու անգլերեն ամփոփումներ: Էջ 95-ում հարկ էր Հայ գրողների ընկերության նախագահ Հովհ. Թումանյանի արդիական լայն հնչեղություն ունեցող 1920 թ. ապրիլի 2-ի հայտնի նամակը ՀՀ կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանին մեջբերել ամբողջական:

Ինչևէ. Դ. Գասպարյանի «Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը» մեծ նվիրումով ու տքնությամբ գրված գիրք է և լավ նվեր Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակին: Ըստ էության, գիտական շարադրանքով հեղինակը ստեղծել է Չարենցի կյանքի վեպը, որն այլ բան չէ, քան կենսագրական հանրագիտարան: Արժե այս գիրքը կարդալ և ճանաչել իրական Չարենցին:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բ. գ. դ., ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարակզբի առաջին երեսնամյակի հայ իրականության հարցեր, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-ռուս պատմագրական, մշակութային կապեր: Հեղինակ է 22 մենագրության ու ժողովածուի և ավելի քան 250 հոդվածների և հրապարակումների: patmhandes@rambler.ru